

ՀԱՅԳԵ ԲՈՒՇՀԱՈՒՉԵՆ (1939-2023)



Արգի հայագիտության արտասահմանյի նշանավոր հետազոտողների շարքից պակասեց ևս մի թանկագին անուն՝ Հայդե Բուշհաուզենը։ Նրա ամուսինը՝ ավստրիացի պրոֆեսոր Հելմուտ Բուշհաուզենը (1937-2014), լայնորեն հայտնի է աշխարհի բյուզանդագիտա-

կան և հայագիտական շրջանակներում։ Նրա անբաժան գործակիցն էր կինը՝ ճարտարապետության դոկտոր Հայդեն։

1976 թ. Հելմուտ և Հայդե Բուշհաուզեններն աշխատում էին Վիեննայի Մխիթարյան Միաբանության գրադարանում։ Նրանց ուշադրությունը գրավեցին Ղրիմում գրված հայկական ձեռագրերը։ Հայերի Ղրիմում հաստատված լինելու և մշակութային ծանրակշիռ ավանդ թողնելու փաստը շատ հետաքրքրեց նրանց, ուստի սկսեցին ավելի խորն ուսումնասիրել Հայոց պատմությունը։ 14-րդ դարի 30-ական թվականներից բազմաթիվ հայեր, հիմնականում Անիից և այլ շրջաններից, ստիպված էին լքել իրենց հայրենիքը։ Հեռանալիս նրանք իրենց հետ էին տանում ձեռագրեր, քիչ չէին նաև արտագաղթող գրիչներն ու մանրանկարիչները։ Պահպանվել են որոշ ձեռագրեր, որոնք սկսել են ընդօրինակվել Հայաստանում և ավարտին են հասցվել Ղրիմում։ Տեղի մանրանկարիչները, իհարկե, պահպանում էին իրենց ազգային ավանդույթները, սակայն զերծ չէին մնում եվրոպական արվեստի ազդեցությունից (Ղրիմի հայաբնակ հատվածը գտնվում էր ջենովացիների իշխանության ներքո)։ Բուշհաուզեն ամուսինները հետաքրքրվեցին գեղարվեստական դպրոցների և էսթետիկական սկզբունքների գուգակցման երևույթով, որով առանձնանում էր Ղրիմի հայկական ձեռագրական արվեստը։ Նրանք նաև կազմեցին Վիեննայի Մխիթարյան Միաբանության հայկական նկարազարդ ձեռագրերի ցուցակը՝ համապատասխան ուսումնասիրությամբ՝ Buschhausen Haide und Helmut, *Die illuminierten Armenischen Handschriften der Mechitaristen-Congregation in Wien*, Wien, 1976:

Իրենց ուսումնասիրությունների խորացման նպատակով Բուլհաուզեն ամուսինները դիմել են Լենինգրադի էրմիտաժի աշխատակից, արվեստաբանության դոկտոր Ալիսա Բանկին, որը նրանց ուղղորդել է կապ հաստատել Մատենադարանի հետ: Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը, որ զբաղվում էր հայերի դեպի Ղրիմ զանգվածային արտագաղթի պատմական պատճառներով, առաջարկեց Բուլհաուզեններին զբաղվել Ղրիմի հայկական մանրանկարչության ուսումնասիրությամբ: Ուստի որոշվեց, որ նրանք պետք է քննեն Մատենադարանում և արևմտյան հավաքածուներում պահվող Ղրիմի հայկական ձեռագրերը՝ Մատենադարանի գիտաշխատող, արվեստաբանության դոկտոր, Ղրիմի մանրանկարչությունն ուսումնասիրող էմմա Կորխմազյանի (1930-2009) համագործակցությամբ: Այդ բազմամյա գործակցությունը պսակվեց «Ղրիմի հայկական մանրանկարչությունն ու ճարտարապետությունը» գրքի հրատարակմամբ, որ ներառում է աշխարհի տարբեր ձեռագրատներում պահվող Ղրիմի հայկական մանրանկարների 1450 լուսանկար:

Հայդե և Հելմուտ Բուլհաուզենները համագործակցել են նաև Մատենադարանի աշխատակից, բժշկագիտության դոկտոր Ստելլա Վարդանյանի հետ: 1978 թվականից ի վեր Բուլհաուզենները մասնակցում էին Մատենադարանի գիտաժողովներին, այցելում Հայաստանի և Արցախի պատմական հուշարձանները: Նրանց մտերիմ բարեկամն էր նաև Մատենադարանի հայկական գրչության կենտրոնների լավագույն և չգերազանցված գիտակ Արտաշես Մաթևոսյանը (1922-2004), որի հետ աշխատել են նշանավոր «էջմիածնի Ավետարանի» ուսումնասիրության և ֆաքսիմիլե հրատարակության վրա: Այն իր մակարդակով և նշանակությամբ հայկական ձեռագրերի հրատարակության առավել աչքի ընկնող օրինակներից է:

Տարիներ շարունակ աշխատելով Մատենադարանում, Հելմուտ և Հայդե Բուլհաուզենները մասնակցել են նաև միջնադարագետների և հայագետների միջազգային բազմաթիվ համաժողովների, հետազոտողներին ծանոթացնելով հայկական արվեստի, ճարտարապետության և ձեռագրական ժառանգության հուշարձաններին:

Մատենադարանի աշխատակիցներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Բուլհաուզեն ամուսիններին և մշտապես վառ կպահեն նրանց հիշատակը:

Նրանց աշխատությունների ցանկին կարելի է ծանոթանալ հետևյալ կապուղիով՝ [http://opac.regesta-imperii.de/lang_de/autoren.php?](http://opac.regesta-imperii.de/lang_de/autoren.php?name=Buschhausen%2C+Helmuth)

[name=Buschhausen%2C+Helmuth](http://opac.regesta-imperii.de/lang_de/autoren.php?name=Buschhausen%2C+Helmuth)

Լինա Պիրադովա
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան,
գերմաներենի թարգմանիչ, զբոսավար